րէ զմիամիտն եւ վնասէ նմայ։ Առժամայն միամիտն վիրաւորի, վրդովի, գայթակղի եւ դառնայ ի նմանէ կսկծալով, բառնի սէրն ի միջէ եւ լինի մեծ ատելութիւն։ Այնուհետեւ տիւ եւ գիշեր ոչ դադարի միա/275b/միտն, թէ որպէս կամ որպիսի հնարիւք առնու զվնասն ի նմանէ, որ ոչ կարէ առնուլ ի նմանէ զվրէժն, քանզի նայ խորամանկ է, միշտ զգաստ։ Նոյն նախանձօվն տոչորի միամիտ այրի մինչի մահ։ Բայց իբրեւ որ երկու կողմանց լինին զգաստ, ոչ լինի պատրանք եւ վնաս։ Ուր ոչ լինի վնաս եւ խաբէութիւն, ոչ նազի սէրն, այլ միշտ մնայ, վասն այսորիկ իբրեւ որ տեսանէ մեր ազգն այս ամենայն [յ]անձանքն եւ հմտանայ ձեր գործոցն, պատրաստ պահէ զինքն եւ զգուշանայ ոչ վնասիլ։ Որ ոչ վնասի, ոչ ատէ, այլ միշտ սիրէ։ Նայեւ իմ կողմանէ գայթակղօքն տեսանեն զայս ամենայն, սկսին ապաշաւել, թէ ի զուր եւ ի տարապարտուց ատեցին զիս, դարձեալ դառնան սիրել զիս եւ դարձեալ հաստատի սէր ի միշի մերում։

Հ. Իրաւ, որ այդպէս է։ Շնորհակալ եմ, որ զերծա[յ] ի տարակուսանաց, մնաս բարով։

Հ. Կացի՛ր եւ լո՛ւր ինձ։ Զամենայն, զոր ինչ որ դուն ինձ հարցիր յինէն, ամենայն ճշմարտութեամբ քեզ պատասխան տվի։ Այժմ ես հարցանեմ ի քէն, պարտիս եւ դուն պատասխանել ինձ։

Հ. Ասայ ինձ, ի՞նչ գիտաւորութիւն էր իմ յընկեր քափուչինին, որ զիս մատնեց ի Ռուստաց։

Պ. Վասն չորս պատճառից։ Նախ, որ դուն միշտ գովաբանէյիր զռուս թագաւորն առաչի Պարսից։ Տեսաւ զքոյ ջերմեռանդ սէրն ընդ ռուստաց, կարծիք անկաւ ի վերայ քոյ, /276a/ թէ դուն ծածուկ միաբանես ընդ ռուստաց, եւ յայտնին ընդ ֆռանցիզաց շրջիլ ի մէջ Պարսից եւ բանիլ վասն Ռուստաց։ Դուն, որ անուամբ ֆռանցիզաց էյիր, ոչ էր պարտ քեզ գովել զռուսն առաչի քափուչինացն։ Դուն դեռեւս ոչ գիտացիր բարեպէս զնրբահայեաց միտսն ֆռանցիզաց։

— Երկրորդ պատճառն էր, որ որովհետեւ իւր մեծաւորն քափուչին Բեռնարդոսն սկսեց յայտնապէս վիճել ընդ քեզ եւ յայտնեաց իւր թշնամութիւնն։ Ոչ կարէր ստել զնայ եւ զքեզ ճշմարտել։ Կամեցուցաւ, որ նորա բանն յառ[ա]ջանայ, քանզի մեք հայոց նման չեմք, որ միաբանիմք ընդ օտարաց եւ հակառակիմք ընդ մերոցն։ Այլ մեք այնպէս բնութիւն ունիմք, որ մեր մարդն, որքան որ սուտ լինի, վասն օտարացն ոչ ստեմք նմայ եւ ոչ թողումք, որ լինի նկուն։

— Երրորդն, որ կամեցաւ հաւատարիմ երեւիլ Ռուստաց, որ յիւրեանց վանորայքն, որք են ի մէջ յՌուստաց ապահովք ապրին, մանաւանդ որ տեսնուն, թէ իրաւի ռուսք որպէս համարի՞ն զքեզ յիւրեանցն եւ թէ՝ ոչ։

— Չորրորդն պատճառ, որ քեզ թողու անդ կալեալ ի ձեռն ռուստաց եւ ինքն միայնակ դառնայ առ շահն, որ ամենայն խորհուրդն լինի մեծ եւ որ դու մեր թագաւորքն չը դէսնուս, յերկեաւ քէն, թէ գիտուն /276b/ մարդ էս եւ լիզուօք ճարտար, չլնի թէ յառաչէս եւ նկուն առնես զքափուչինքն փոխանակ մատնութիւնն, որք արարին ընդ քեզ։

— Եւ մնացեալ պատճառքն, որք են ի միշի մերում խորհուրդ ոչ կարեմ յայտնել, այսքանն բաւական լիցի վասն քոյ հրամանուցն։

Հ. Ես միամիտ գովէյի զռուսն, նոցա գիտաւորութիւնն ոչ գիտացի։ Բայց աղաչեմ լսէ յերկայնմտութեամբ։ Եթէ կրոնաւոր ոմն առաքէր զիս այնիշ քաղաքն բերել վասն յիւր հնագոյն գրեանք, յորժամ որ որ[ո]նէյի գրեանքն, գտանէյի անդ լաւ թուր մի՝ գինն էժան, գնէյի զնայ, թէ տանիմ զսայ այնիշ զինուորի։ Իբրեւ որ դառնայի ի անդի հանդերձ բազում գ[ր]քօք, որ բերէյի վասն կրոնաւորին եւ զսուրն՝ ոչ, քանզի ի՞նչ է փոյթ ունէր կրոնաւորն զսրէ։

— Յիւր մեծաւորի անունն առաւել կամեցաւ շինել, քան թէ պահել զպատուէրն Աստուծոյ, ապայ

— Մի՞թէ այտ արարն վայել է կրոնաւորացն։ Ոչ։